եղեւ աներեւոյթ, եւ ապա պատմեաց ամենեցուն զտեսիլն և նոքա փառաւոր առնէին զԱստուած։ Եւ մինչդեռ զարմացեալ էին 'ի վերայ այսմ, երեւեցաւ այլ նշան. զի ամենասուրբ կոյսն Մարիամ Աստուածածին տպաւորեցաւ 'ի նմին սեան ունելով զՍ. Մանուկն Յիսուս 'ի գիրկս իւր, և Խաչ Միրանի յաջոյ ձեռին Տեառն, և Խաչ մի 'ի միւսում սեան երեւեալ. եւ զայս ամենայն նշանս տեսին արդարք եւ մեղաւորք առ հասարակ 'ի 29 Մեհեկանի ամսոյ յաւուր Կիւրակէի 'ի ժամ Պատարագին։ Եւ բազում ախտաժետք եւ դիւահարք բժշկեցան յերեւիլ նշանացն. եւ նշանք բժշկութեանն եղեն նախ 'ի վերայ Հայոց, զի կին մի անուն Սողոմէ 'ի Մոկաց գաւառէ, կարկամեալ 'ի 23 ամաց հետէ, եկն եւ անկաւ առաջի սեանն և ջերմ հաւատով խնդրէր զբժշկութիւն 'ի Տեառնէ, որ և յարուցեալ եկաց 'ի վերայ ոտից իւրոց եւ գոհանայր զԱստուծոյ. և յետ պատմելոյ զայլ բժշկութիւնս, ասէ, եղեւ խաղաղութիւն յԵրուսաղէմ և կատարեն զտօն Տեառնընդառաջին ըստ Յայտնութեանն, ըստ դրութեան առաքելոյն Յակոբայ։ Զայս վասն զգուշութեան գրեցի 'ի Հայս, որ անդէն իսկ ականատես եղէ մեծամեծ սքանչելեացն որք գործեցան։ Մանաւանդ զի զգոյշ լինիջիք 'ի չար խորհողաց անտի, որք սնոտի բանիւք խոտորեն 'ի կարգադրութեանց Ս. Յակոբայ և այլափոխեն զՏօնս, այլ դուք որպէս լուարուք, 'ի նմին կացջիք մինչեւ 'ի գալուստն Տեառն, այլովքն հանդերձ (557)։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հերակլ Կայսր. Առումն Երուսաղէմի 'ի Պարսից. Գերեվարիլ Ս. Խաչին և Զաքարիայ Պատրիարգին։ Մոգեստոս երէց տեղապահ. Թուղթ նորին առ Կոմիտաս Կաթուղիկոս Հայոց. Դարձ Ս. Խաչին յԵրուսաղէմ։

ԲՌՆԱԻՈՐՆ Փոկաս ելից արեամբ զքաղաքն Թագաւորեալ. 'ի սուր եհան զբնակիչսն Անտիոքայ և Երուսաղէմի և զամենայն կողմանս դաւառացն այնոցիկ, որք ոչն կամէին հնազանդիլ Թագաւորութեան նորա։ Եհաս Հե-